

Մ Ա Ս Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց Ը

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2013 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի դրույթները և դրա իրականացումն ապահովող միջոցառումները, ինչպես նաև հաշվի առնելով ընթացիկ տարում արձանագրված տնտեսական զարգացումների միտումները, 2013թ.-ին ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հիմնականում միտված է լինելու մակրոտնտեսական կայունության պահպանմանը՝ ապահովելով կայուն տնտեսական աճ: Կարևորվում է նաև տնտեսական աճը ապահովելու համար լրացուցիչ խթանների բացահայտումն ու ներդրումը՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները (ծրագրերը):

Տնտեսական զարգացում

ՀՀ կառավարությունը 2013 թվականին հետևողականորեն շարունակելու է մեկնարկած բարեփոխումները՝ գործարար միջավայրի բարելավման, իրական հատվածին աջակցության, գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների զարգացման և, ընդհանուր առմամբ, տնտեսության դիվերսիֆիկացման մեծացման ու արտահանելի հատվածի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնել երկրի մրցունակությունը: Տնտեսական քաղաքականության շրջանակը ձևավորող ուղենիշերը լինելու են դիվերսիֆիկացված և արտահանմանն ուղղված ու բարձր մրցունակությամբ տնտեսության ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը

տնտեսական քաղաքականության հիմնական շեշտադրումը դնելու է զարգացած արդյունաբերությամբ տնտեսության կառուցվածքի ձևավորման, գործարար ու ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, առևտրի կարգավորման արդյունավետ գործիքների օգտագործմամբ արտաքին շուկաների հասանելիության ու մատչելիության բարձրացման, տարածաշրջանային ինտեգրացիոն միավորների հետ համագործակցության ընդլայնման, տնտեսության առանձին ճյուղերում գիտելիքային արդյունքի և նորամուծությունների կիրառությունների ընդլայնման ուղղությամբ հասցեական գործողությունների վրա:

Համաշխարհային տնտեսական զարգացումներով պայմանավորված նոր մարտահրավերներին դիմակայելու և տնտեսության հետճգնաժամային զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության 2013թ.-ին իրականացվող առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան.

Գործարար և ներդրումային միջավայր

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսերի նվազեցմանը:

2013թ. Կկարևորվի վերազգային ընկերությունների ներգրավման և ազատ տնտեսական գոտիների ստեղծման գործընթացը՝ հաշվի առնելով դրանց առանցքային նշանակությունը նոր տեխնոլոգիաների փոխանցման, իրացման շուկաների ընդլայնման և աշխատանքի բարձր արտադրողականության ապահովման գործում:

Տեսչական բարեփոխումների շրջանակներում իրականացվելիք աշխատանքներն ուղղված են լինելու առաջին հերթին ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ամբողջական ներդրմանը, որով բոլոր ստուգող մարմինների համար կապահովվեն ՀՀ կառավարության կողմից հաստատված ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություններ և ստուգաթերթեր: Նախատեսվում է կրճատել ստուգող մարմինների քանակը և բարելավել տեսուչների աշխատանքային պայմանները: Ստուգող մարմիններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի և ընդհանուր աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով մշակել ու ներդնել ռիսկերի գնահատման և տեղեկատվության փոխանակման միասնական մոտեցումներ ունեցող էլեկտրոնային համակարգ:

Արտաքին րնտեսական ոլորտում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն ՀՀ կառավարության կողմից որդեգրված արտաքին առևտրի ազատական սկզբունքի պահպանմանը: Առանձնակի կկարևորվի Եվրամիության հետ Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրման բանակցությունների մեկնարկի համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Հայաստանյան գործարարները կշարունակեն օգտվել ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» արտոնյալ առևտրային ռեժիմից, ջանքեր կգործադրվեն այդ ռեժիմի շարունակականության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև կշարունակվի արտաքին շուկաների մատչելիության ապահովմանն ուղղված քաղաքականությունը: Առանձնակի ուշադրության կարժանանան արտերկրներում հայրենական արտադրողի շահերի պաշտպանության և Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացման հետ կապված հարցերը:

Կշարունակվեն ԱՊՀ անդամ գործընկեր երկրների և ԵՎՐԱԶԵՍ-ի հետ բարձր մակարդակի համագործակցությունը:

Տնտեսական մրցակցություն և սպառողական շուկաների ոլորտներում 2013թ. իրականացվելիք միջոցառումներն ուղղված կլինեն սպառողական շուկայում հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային պահանջներին համապատասխանող սպառողների շահերի պաշտպանության համակարգի կատարելագործմանը, գործարար էթիկայի կանոնների ու ստանդարտների ներդրմանը, ոլորտում հսկողության հարցում հասարակության տեղեկացվածության և վերջինիս հետ հետադարձ կապի ապահովմանը, տեղեկացված հասարակության ձևավորմանը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը, կորպորատիվ հսկողության կանոնների ստեղծման համակարգի ձևավորմանը:

Փոքր և միջին առևտրային օբյեկտների շահերի պաշտպանության և մրցակցության նպատակով կառավարությունը սահմանելու է խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչները:

Առանձնահատուկ ուշադրության կարժանանա Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգի ձևավորման խնդիրը, որի լուծման նպատակով 2013թ. կիրականացվեն սպառողների պաշտպանության պետական վերահսկողության համակարգի կատարելագործման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների պաշտպանության միջոցառումների վերաբերյալ հանրությանն իրազեկման լայնամասշտաբ ծրագրեր՝ էապես բարելավելով ապրանքների անվտանգությանը ներկայացվող պահանջների ապահովումը:

Որակի ենթակառուցվածքի ոլորտում նախատեսվող միջոցառումները հիմնականում նպատակաուղղված են լինելու որակի ազգային ենթակառուցվածքի վերափոխմանը, որի նպատակը

տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ազգային ընթացակարգերի արդիականացումն է՝ ներքին և արտաքին բնույթի խնդիրներին լավագույնս ծառայելու համար:

2013թ. աշխատանքներ կիրականացվեն նաև ոլորտը կանոնակարգող նոր ընդունված օրենքների կիրարկումն ապահովող ենթաստրատեգիական կարգավորման ուղղությամբ ուղղությամբ, որոնք միտված կլինեն տնտեսվարող սուբյեկտների վարչական բեռի կրճատմանը և սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

Որակի ապահովման պետական քաղաքականության ձևավորման տարրերից է լինելու սերտիֆիկացման գործառույթի առանձնացումը ստանդարտացման ազգային մարմնից:

Կշարունակվեն աշխատանքները սպառողական շուկայում արտադրանքի և ծառայությունների որակի միջազգային ISO և Եվրոպական CEN ստանդարտների ուղղակի կիրառման և ոչ կանոնակարգվող բնագավառներում որակի ապահովման պետական քաղաքականության ձևավորման ուղղությամբ:

Հավատարմագրման ոլորտում 2013թ. իրականացվող միջոցառումները նպատակաուղղված կլինեն հավատարմագրման համակարգում բարեփոխումների իրականացմանը և Եվրոպական, միջազգային, տարածաշրջանային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցությանը: Մասնավորապես՝ աշխատանքներ կիրականացվեն միջազգային պահանջներին համապատասխան քաղաքականապես անկախ իրավաբանական մարմնի կարգավիճակ ունեցող նոր հավատարմագրման ազգային մարմնի ստեղծման և կայացման, մարդկային ռեսուրսների զարգացման, ինչպես նաև կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ: Նշված բարեփոխումների արդյունքում կբացառվի նույն ապրանքի կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման անհրաժեշտությունը:

Մտավոր սեփականության ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում կուղղվի մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ և հուսալի պաշտպանության համակարգի կայացմանը:

2013թ. կշարունակվի բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը՝ այն Եվրահանձնաժողովի կողմից ընդունված օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով:

Աշխատանքներ կիրականացվեն ուղղված՝ իրավակիրարկող մարմինների կարողությունների զարգացմանը, ինչպես նաև իրազեկման մակարդակի բարձրացմանը, վերապատրաստմանը, տեղեկատվության հասանելիությանը:

Կշարունակվի նոր որակի *արդյունաբերական քաղաքականության* իրականացումը, մասնավորապես՝ կներդրվեն կառավարման ժամանակակից մոդելների, նորամուծական արդյունքի կիրառման համակարգեր՝ արդի, մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ:

Կարևորելով արդյունաբերության արտադրանքի արտահանման դիվերսիֆիկացման և ներմուծման նկատմամբ առաջանցիկ աճ ապահովելու անհրաժեշտությունը՝ կիրականացվի Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն, որը կուղեկցվի արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումներով:

Մասնավորապես հասցեական գործողությունների կիրականացվեն ընտրված ոլորտների ուղղությամբ՝ ապահովելով արդեն իսկ հաստատված ոլորտային ռազմավարությունների իրականացման միջոցառումների ծրագրերի կատարումը (ճշգրիտ ճարտարագիտություն, կոնյակագործություն, գինեգործություն և դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ): Ինչպես նաև կմշակվեն առանձին ռազմավարություններ մնացած ոլորտների համար (ոսկերչական արտադրատեսակների արտադրության ոլորտ, որը ներառում է ադամանդագործության, ժամացույցների արտադրության և զարդեղենի արտադրության ենթաօլորտները, թեթև արդյունաբերություն, պահածոների հյուսթերի, ջրերի արտադրություն):

Կշարունակի ներդրումների ներգրավման և արտահանման խրախուսման գործիքակազմի կիրառումը և կատարելագործումը, ինչպես նաև նոր գործիքների ներդնումը, դրանց միջոցով հասցեական և նպատակային օժանդակություն ցուցաբերելով զարգացման ծրագրեր իրականացնող ընկերություններին: Կշարունակվեն նոր և ժամանակակից արտադրությունների կազմակերպման նպատակով իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցման քաղաքականությունը, այդ թվում՝ հարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը կարևորվում է, որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության և մրցունակության բարձրացման գործիք: Այդ նպատակով 2013թ. աշխատանքներ կիրականացվեն ընտրված թիրախային SS շուկաներում Հայաստանը առաջատար երկիր դարձնելու, ինչպես նաև զարգացած և առաջադեմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն ունենալու ուղղությամբ:

Ակտիվ ջանքեր կգործադրվեն արտերկրում և Հայաստանում ոլորտի պատշաճ կերպով ներկայացման, SS ոլորտում հաջողությունների հասած երկրների և միջազգային կառույցների հետ համագործակցության խթանման և ապահովման, միջազգային SS կազմակերպություններին անդա-

մակցման, համաշխարհային ճանաչում ունեցող SS ընկերությունների ներգրավման, ինչպես նաև Հայաստանի՝ որպես SS տարածաշրջանային կենտրոնի վարկանիշի ձևավորման ուղղությամբ:

Գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները կշարունակվեն նաև 2013թ.՝ ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության շրջանակներում:

Միջուկային բժշկության ծրագրի շրջանակում 2013 թվականին կիրականացվեն ռադիոիզոտոպների արտադրությունը կազմակերպելու նպատակով ստեղծված Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի կառուցման, ցիկլոտրոնի ձեռք բերման, դրա շահագործման և ճառագայթման աղբյուրների արտադրության համար անհրաժեշտ թույլտվությունները, արտասահմանյան ներդրողների ներգրավման, ինչպես նաև ԲՈՒՀ-երում միջուկային բժշկության ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացների կազմակերպման աշխատանքները:

Կշարունակվեն իրականացվել Գյումրու տեխնոպարկի ծրագիրը և 2011թ. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարածքում բացված Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի զարգացման աշխատանքները:

Կիրականացվեն նաև Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ ծրագրերի տարածաշրջանային լաբորատորիայի ծրագրի ներդրման աշխատանքները, որը կհանդիսանա կենտրոնական օղակ տարածաշրջանում մոբայլ բովանդակության և ծրագրերի բնագավառում գործող նորարարական ընկերությունների մրցունակության բարձրացման համար:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման պետական աջակցության նպատակն է երկրում ձեռնարկատիրության ակտիվացման նպաստումը, տարածքային համաչափ զարգացման ապահովումը, տնտեսության դիվերսիֆիկացման գործում ՓՄՁ-երի դերի մեծացումը, զբաղվածության և ինքնազբաղվածության մակարդակի աճը: Այդ առումով 2013թ. ոլորտում կարևորվելու են աջակցության նոր մեխանիզմների կիրառմամբ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության գործիքների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը: ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը, գործարար նախաձեռնություններին աջակցության (ֆինանսական, խորհրդատվական և այլ) տրամադրման շարունակականության ապահովումը, արտահանման հնարավորությունների ընդլայնումը, գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես՝ կանանց նախապատվություն տալով ՀՀ մարզերում, հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին:

Ջրոսաշրջության ոլորտում առաջնային միջոցառումներն ուղղված կլինեն նոր զբոսաշրջային երթուղիների, ուղղությունների և արդյունքների մշակմանն ու զարգացմանը: Այս առումով, կշարունակվեն միջոցառումներն ուղղված՝ Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարության, Գորիս և Գյումրի քաղաքների, “Տաթև” զբոսաշրջային կենտրոնի զարգացման, ինչպես նաև Սևանա լճի ափին բարձր լեռնային մարզական կենտրոնի հիմնման ծրագրերի պատշաճ իրականացմանը:

Առանձին ուշադրություն կդարձվի մարքեթինգային քաղաքականության իրականացմանը՝ գովազդատեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացման և կատարելագործման միջոցով, որի շրջանակներում կշարունակվի համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ամրապնդումը:

2013թ. կշարունակվեն նաև միջազգային համագործակցության ակտիվացմանը, զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների կայուն որակի ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը և ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքները:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

2013թ.-ին ոլորտում իրականացման ենթակա միջոցառումներ կհանդիսանան.

Տարածքային զարգացման նպատակով.

-մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմումը,

-Հայաստանի մի շարք քաղաքների զարգացման տեմպերի արագացման և ներդրումային ակտիվության խրախուսման՝ պետական մասնավոր համագործակցությամբ, նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը,

-մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճի ապահովումը, համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը,

-համայնքների անձնագրավորումը՝ յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժը, խնդիրները ուսումնասիրելու և դրանց լուծումներ տալու համար,

-ենթակառուցվածքներում ներդրումների իրականացումը (այդ թվում՝ համագործակցելով

մասնավոր հատվածի հետ)՝ նպատակ ունենալով էապես բարելավվել գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմանները,

-տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով համակարգի մշակումը և ներդրումը, այսինքն՝ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ համայնքի, համայնքների խմբերի, մարզի համար,

-տնտեսական զարգացման և մարդկային աղքատության ցուցանիշների հիման վրա մարզային զարգացման ծրագրերի վերանայումը, ինչը հնարավորություն կտա արտացոլել յուրաքանչյուր մարզին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները, կնպաստի տարածքային զարգացման պլանավորման կատարելագործմանը և հնարավորություն կտա տարբեր մարզերի զարգացման ծրագրերը դարձնել համադրելի,

-արտագնա նիստերի անցկացման միջոցով մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանումը և դրանց իրագործմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը,

-մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացումը,

-մրցունակ և գրավիչ տարածքների զարգացման նպատակային ծրագրերի մշակումը,

-մարզային զարգացման ծրագրերի իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրումը:

Տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացման նպատակով՝ հստակորեն կսահմանազատվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ուսումնասիրություններ կիրականացվեն համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության գործունակ մեխանիզմների ներդրումն ապահովող օրենսդրական նախագծերի մշակման համար:

Կշարունակվեն միջոցառումներ իրականացվել “Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին” օրենքի դրույթների արդյունավետ կիրառման ուղղությամբ:

Կշարունակվեն աշխատանքները << համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների հայեցակարգային մոտեցումների լրամշակման ուղղությամբ, հայեցակարգային մոտեցումներում նախատեսելով լրացուցիչ չափորոշիչներ, ինչպես նաև հայեցակարգային մոտեցումներից բխող օրենքների, այլ իրավական ակտերի, տնտեսական հիմնավորումների, խրախուսման

ծրագրերի և այլ միջոցառումների մշակման համար կիրականացվեն անհրաժեշտ ուսումնասիրություններ:

Համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման և տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացումների մեղմման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ կիրականացվեն ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրման հիմնավորման համար:

Համայնքներում կիրականացվեն ծրագրային բյուջետավորման ներդրման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրամիության երկրների և միջազգային կազմակերպությունների ու բանկային կառույցների հետ համագործակցության միջոցով համայնքներում դրամաշնորհային ու վարկային ծրագրերի ներգրավմանն ապահովմանն ուղղված աշխատանքներ:

Կշարունակվեն աշխատանքները համայնքների բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործման, բյուջեների ընդլայնման և վարչարարության բարձրացման ուղղությամբ:

Համայնքների համար կստեղծվի տեղեկատվական միասնական բանկ՝ բոլոր համայնքների տեղեկատվական կենտրոնացված շտեմարան: Հանրապետության համայնքներում կներդրվեն նաև համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր, կիրականացվի տեղեկատվական համակարգերն օգտագործող աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում:

Ուսումնասիրություններ կիրականացվեն համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով, հսկողություն կսահմանվի համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ, կապահովվի ատեստավորումների ու մրցույթների անխափան ընթացքն ու թափանցիկությունը:

Արխիվային փաստաթղթերի մշտական պահպանության և անընդհատ համալրման նպատակով 2013թ.-ին իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներն են լինելու՝ արխիվային նյութերի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումների, ինչպես նաև արխիվային այլ նյութերի վերականգնող և թվայնացնող սարքավորումների ձեռքբերումը, այլ պետությունների հետ համագործակցության, նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանության նպատակով՝ ԱՊՀ և միջազգային այլ երկրների հետ արխիվագիտական կապերի ամրապնդումը, արխիվագիտության բնագավառում արդիական փորձի փոխանակումը:

Բնակչության միգրացիայի ոլորտում իրականացվելիք աշխատանքները նպատակաուղղված են լինելու միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման

գործողությունների ծրագրի ապահովմանը, ինչպես նաև միգրանտների, ապաստան հայցողների ու փախստականների հարցերին վերաբերող միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով ստանձնած հանձնառությունների կատարմանը:

ԵՄ-ի հետ կընդլայնվի և կխորացվի միգրացիոն հարցերով համագործակցությունը: Մասնավորապես, քայլեր կձեռնարկվեն միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի և վարչական համակարգի ԵՄ համապատասխան օրենսդրության և ԵՄ անդամ երկրների լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքների հետ մոտարկման ուղղությամբ՝ հաշվի առնելով ազգային պետական շահերը: ՀՀ քաղաքացիների այցելությունները ԵՄ անդամ երկրներ կիրականացվեն հեշտացված վիզային ռեժիմի պայմաններում:

ՀՀ պետական սահմանի “Բագրատաշեն”, “Բավրա” և “Գոգավան” անցման կետերում նախատեսվում է հիմնել ժամանակակից ենթակառուցվածքներ, ինչը էականորեն կդրսևացնի մարդկանց տեղաշարժը:

Աշխատանքներ կտարվեն այլ երկրներում ստեղծված արտակարգ կամ ռազմական դրության իրավիճակների պայմաններում բնակչության հնարավոր զանգվածային տեղաշարժերի կանոնակարգման նպատակով:

Միջոցներ կձեռնարկվեն օտարերկրյա քաղաքացիներին փախստական ճանաչելու դեպքում նրանց՝ ՀՀ հասարակությանն արդյունավետ ինտեգրման ապահովման ուղղությամբ:

ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում կլինեն արտագնա աշխատանքային գործունեության մեջ ներգրավված ՀՀ քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության, ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կանխարգելման, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը արդյունավետ կազմակերպելու և այդ երևույթից տուժածների պաշտպանության, ինչպես նաև ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների զբաղվածության պայմանների կանոնակարգման հարցերը՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2013թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտի կայունացման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական

պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար:

Իրականացվող քաղաքականությունը ուղղված կլինի նաև գյուղական տարածքների համաչափ զարգացմանը և ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդմանը և զարգացմանը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը, վարկավորման մատչելիությանը:

2013թ. կարևորվելու է հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը:

«Կառավարության գործունեության ծրագրով նպատակադրված է գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացման միջոցով, գյուղում ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի անհատի լիարժեք ինքնադրսևորման համար: Առանձնակի ուշադրություն է դարձվելու բարձր լեռնային ու սահմանամերձ շրջաններին:

Նախատեսվում է խորացնել նաև ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,

- տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

- գյուղատնտեսության սպասարկման և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,

- գիտակրթական, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ուժեղացում, համակարգի բարելավման մեխանիզմների ներդրում,

- ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն:

Որպես ագրոպարենային համակարգի զարգացման 2013թ. քաղաքականության գլխավոր նպատակ շարունակելու է պահպանվել երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության վարկավորման բնագավառում առկա խոչընդոտների վերացման, մասնավորապես, առավել անբարենպաստ պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային տոկոսադրույքի սուբսիդավորման, օրենսդրական հիմքերի բարելավման և նպատակային ծրագրերի համաֆինանսավորման

միջոցով ագրարային ոլորտում տարբեր տնտեսվարման ձևերի զարգացման ուղղությամբ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման, մասնավոր հատվածի նախաձեռնողական կարողությունների ավելացման բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և տնտեսվարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել «Էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ միջուկային նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների իրականացման համակարգումը, սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

«Ը 2013թ. պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կշարունակվեն Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման, Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրերի աշխատանքները: Կմեկնարկեն Հայաստան-Վրաստան 400կՎ լարման օդային գծի կառուցման նախապատրաստական ծրագրերի, ինչպես նաև Հրազդան-Շինուհայր 220կՎ լարման օդային գծի վերակառուցման ու Հայաստան-Իրան 400 կՎ լարման նոր էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքները:

Հայ-ռուսական համատեղ «Մեծամորէներգաստոմ» ՓԲԸ-ի կողմից 2013թ. կիրականացվեն միջուկային նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես բանակցությունները ծրագրի ֆինանսավորման միջոցների ներգրավման նպատակով::

Սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվեն Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքները:

2013թ. նախատեսվում են հանրապետության տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները՝ Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման աշխատանքների իրականացում, Իրանի և Հայաստանի

էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Իրենց աշխատանքները կշարունակեն “էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի” հիմնադրամը՝ իր գործունեության նպատակակետում ունենալով նաև հանրային նշանակության շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացման խթանումը, ինչպես նաև Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից նոր ֆինանսավորում ստացած “Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ” ծրագիրը:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ շարունակվելու են հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման, գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն նաև գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Քիմիայի բնագավառում 2013թ. իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրներն են լինելու.

- Գազաքիմիական ճյուղի զարգացման ծրագրի իրականացումը ըստ ժամանակացույցի, ինչը կնպաստի համաշխարհային գազաքիմիական արդյունաբերության շուկաներում Հայաստանի դիրքի վերականգնմանը՝ երկրի համար ավանդական քլորոպրենային կաուչուկի և զուգակցող արտադրանքի հատվածում.

- Փոքր քիմիայի զարգացմանը նպաստող հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը,

- բնագավառի կարգավորմանն ուղղված ազգային ստանդարտների մշակման աշխատանքների իրականացումը՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ,

- ժամանակակից պահանջներից բխող բնապահպանական խնդիրների լուծումը:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2013թ. իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղվելու է հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

- հետախուզված ընդերքի պաշարների տնտեսական գնահատման և հաստատման ապահովմանը,

-օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարմանը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացմանը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարմանը,

-ընդերքօգտագործող կազմակերպությունների գործունեության հետ կապված հիմնախնդիրների լուծման համար նոր, ժամանակակից, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված մոտեցումների կիրառման ապահովումը,

-Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովմանը,

-ընդերքի օգտագործման և պահպանության վերահսկողական աշխատանքների իրականացմանը,

-“Ընդերքի մասին” ՀՀ նոր օրենսգրքի ընդունումից հետո ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակմանը:

Միջուկային անվտանգության բնագավառում 2013թ. առաջնահերթ ուղղություններ են լինելու միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումը և կատարելագործումը:

Ոլորտում իրականացվող առաջնահերթ միջոցառումներն են հանդիսանալու.

-ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) և Եվրոպական միության անվտանգության ստանդարտների, չափանիշների պահանջներին, հաշվի առնելով նաև “Սթրես-թեսթերի” արդյունքները, զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացումն ու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը, ուրանի հանքի հնարավոր արդյունահանումը, “Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին” օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը,

-“Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն” ՓԲԸ-ի զարգացումը.

-իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան,

-ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը,

-շրջակա միջավայրի ռադիացիոն մոնիտորինգի և վերահսկողության անցկացումը,

-մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

-միջուկային և ռադիացիոն անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

-միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,

-միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,

-ժամանակակից պահանջներին համապատասխանող վթարային կենտրոնի զարգացումը,

-միջազգային համագործակցության զարգացումը:

Ջրային տնտեսություն

2013թ. ջրային տնտեսության բնագավառում կարևորվելու են անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակականությունը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումները:

Խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ են լինելու համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, մասնավոր կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կատարելագործման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնաձայնագրային ապահովման շարունակումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2013թ. ընթացքում շարունակվելու են ներդրումների իրականացումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների

փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

-կազմակերպել մասնավոր կառավարման պայմանագրերով ստանձնված պարտավորությունների իրականացման, մոնիթորինգի և վերահսկման գործընթացները,

-ապահովել շարունակական ջրամատակարարման ծրագրերի իրականացումը “Հայջրմուղ-կոյուղի”, “Լոռի ջրմուղ-կոյուղի”, “Շիրակ ջրմուղ-կոյուղի”, և “Նոր-Ակունք” ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում և նպաստել ջրամատակարարման տևողության ավելացմանը,

-Համաշխարհային բանկի, Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), Ասիական զարգացման բանկի Եվրոպական ներդրումային բանկի, Եվրամիության և այլ դոնորների հետ իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումային ծրագրեր՝ հիմնական նպատակ սահմանելով ջրային համակարգերի կառուցման, վերակառուցման, վերանորոգման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ապահովել ջրամատակարարման շարունակականությունը, ջրի որակի բարելավումը,

-ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը,

-իրականացնել ուսումնասիրություններ և համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ շարունակել աշխատանքները կեղտաջրերի մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղություններով,

-ռոռգման հատվածում իրականացնել ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,

-տարբեր դոնոր կազմակերպությունների հետ շարունակել բանակցություններ վարել համակարգի ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող և ծրագրերում չընդգրկված գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով ներդրումներ և աջակցություն իրականացնելու ուղղությամբ,

-նպաստել ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը,

-նպաստել “Սևան-Հրազդանյան ջրառ” և “Ախուրյան-Արաքս ջրառ” ՓԲԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը,

-ապահովել Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու Դաբիի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը,

-շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը,

-խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը,

-շարունակել բարելավել օրենսդրական դաշտը և նորմատիվային բազան,

-իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ ջրամբարաշինության ծրագրերի իրականացման ուղղությամբ:

2013թ. ընթացքում շարունակվելու է խմելու և ոռոգման համակարգերը շահագործող առևտրային ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը: Այն պայմանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված քաղաքականության չհստակեցման հանգամանքով:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ շարունակվելու են կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որը կապահովվի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

Տրանսպորտ և կապ

Բնագավառում 2013թ. իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ:

Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շուրջ 30.43 կմ ճանապարհահատվածների, ինչպես նաև և 6 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքների շրջանակում կիրականացվեն 3166.7 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, ինչպես նաև ճանապարհային գծանշման կանոնների ապահովման ընդլանմանն ուղղված աշխատանքներ:

Կշարունակվեն աշխատանքները, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ ծրագրի շրջանակներում,

ճանապարհահատվածների վերականգնման և դրանց տեխնիկական հսկողության աշխատանքները, ինչպես նաև նոր՝ Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիրը:

Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի շինարարության շրջանակներում 2013թ. կշարունակվեն իրականացվել 2012 թվականին մեկնարկված Երևան-Աշտարակ 11,4 կմ երկարությամբ ճանապարհային հատվածի վերակառուցման, Երևան-Արարատ 37,9 կմ երկարությամբ հատվածի ճանապարհային անվտանգության բարձրացման, Աշտարակ-Թալին 41.9 կմ երկարությամբ ճանապարհային հատվածի վերակառուցման, ինչպես նաև լայնացման աշխատանքները:

2013թ. կշարունակվեն «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) ներդրման աշխատանքները:

2013 թվականին կավարտվեն Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղային գծի նախագծման աշխատանքները և կիրականացվեն միջոցառումներ՝ շինարարության աշխատանքները նախապատրաստելու ուղղությամբ:

Երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների կազմակերպումը բարելավելու նպատակով նախատեսվում է մշակել նոր երթուղային սխեմաներ՝ երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների կապակցմամբ՝ փոխադրումների սկզբնակետերի ու վերջնակետերի համատեղման ճանապարհով:

2013թ. աշխատանքներ կիրականացվեն “Հայփոստ” փակ բաժնետիրական ընկերությունում կառավարման նոր մոդելի ներդնման և բաժնետոմսերը վարձակալության հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հսկողության ուղղությամբ: Կառավարման նոր մոդելի ներդրմամբ հնարավորություն կընձեռնվի ապահովել ներդրումային ծրագրերի և նրանց կատարման ժամկետների առավել արդյունավետ կիրառումը, կապահովվի “Հայփոստ” փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնումը, միջազգային նորմերին դրանց համապատասխանեցումը, արդիականացումը և բարելավումը, ինչպես նաև հնարավորություն կընձեռնի բարեփոխել փոստային կապի բնագավառի զարգացման քաղաքականությունը:

Ավիացիա

2013թ. ակտիվորեն շարունակվելու է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման շրջանակներում մշակված ազգային ծրագրով նախատեսված տրանսպորտային քաղաքականության իրականացումը, որը կնպաստի թռիչքների և

ավիացիոն անվտանգության ապահովմանը, օդային փոխադրումների և հարակից գործունեության իրականացման շուկայի զարգացմանը:

Ոլորտի 2013թ. գործունեության հիմնական ուղղություններն են լինելու.

-թռիչքների անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-օդանավերի թռիչքային պիտանիության գնահատումը,

-օդային երթևեկության կազմակերպման ապահովման կանոնակարգումը,

-օդանավակայանների (աերոդրոմների) սերտիֆիկացումը և օդանավակայանների (աերոդրոմների), վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողությունը,

-օդերևութաբանական, աերոնավիգացիոն տեղեկատվական, տեխնիկական և այլ վերգետնյա ծառայություններ մատուցող մարմինների նշանակումն ու դրանց գործունեության վերահսկումը,

- ՀՀ տարածքում պատահարների և միջադեպերի մասնագիտական քննությունը, այլ պետությունում՝ ՀՀ-ում գրանցված կամ ՀՀ շահագործողի կողմից շահագործվող օդանավի հետ կապված նման քննությանը մասնակցությունը, ապահովության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա վթարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության մատուցումը, ՀՀ տարածք թռիչքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի տեսչական ստուգումների անցկացումը,

- ՀՀ ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի ներդրումը և վարումը,

-ՀՀ-ում քաղաքացիական ավիացիայի բնագավառում որոնողական-փրկարարական աշխատանքների համակարգումը,

-ավիացիոն մասնագետների վկայագրումը և որակավորումը,

-օդային փոխադրումների կարգավորումը և լիցենզավորումը:

Քաղաքաշինություն

Շինարարության ոլորտում 2013թ. ընթացքում կարևորվելու է կրթական և մարզական օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակականությունը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մարզական կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված “Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն” ծրագիրը ևս կկրի շարունակական բնույթ,

ապահովելով աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում:

Արտակարգ իրավիճակներ

2013թ. ոլորտում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

-փրկարարական համակարգի կատարելագործում և զարգացում այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին:

-փրկարար ծառայողների մասնագիտական և հատուկ պատրաստականության բարձրացում, բնակչության ուսուցում, ղեկավար մարմինների նախապատրաստման ժամանակակից մեթոդների ներդրում,

-արտակարգ իրավիճակներ առաջացնող պատճառների բացահայտման, դրանց կանխման ու կանխարգելմանն ուղղված գործունեության նկատմամբ պետական վերահսկողական գործառույթների ուժեղացում,

-արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում և տեխնիկական հագեցվածության ապահովում,

-հիդրոոդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացման, համակարգիչների և այլ կարգի նորագույն տեխնիկական միջոցների ներդրման ճանապարհով դիտարկումների ծրագրային համակարգերը միջազգային չափանիշների մակարդակին և ՀՕԿ-ի (Համաշխարհային օդերևութաբանության կոմիտե) կողմից ընդունված ստանդարտներին մոտեցնելուն,

- սպասարկման որակի բարելավման նպատակով հիդրոոդերևութաբանական գործող սարքավորումների անխափան շահագործման ապահովում,

-մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության զարգացում, որի արդյունքում կավելանան կարկտահարություններից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, այգիների պաշտպանությունը և պաշտպանվող տարածքների մակերեսները,

-հանրային իրազեկման համակարգի կատարելագործում և զարգացում,

- մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի “911” դիսպետչերական ծառայության զարգացում՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին: Իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործում:

-ՀՀ տարածքում սեյսմիկ վտանգի գնահատման համար օգտագործվող դիտացանցերի շուրջօրյա դիտարկումները առավել արդյունավետ դարձնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության դիտացանցի վերագինում և արդիականացում,

-գիտատեխնիկական նվաճումների և նորագույն մոտեցումների ներդրում արտակարգ իրավիճակների կառավարման բնագավառում,

- նյութական արժեքների պահպանում,

-աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի զարգացում, աղետների բժշկության հանրապետական ցանցի ստեղծում:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի 2013թ. հիմնական խնդիրներն են համարվելու.

-տարածաշրջանում խաղաղության, անվտանգության, կայունության և զարգացման նպաստումը,

-Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը,

-Ռուսաստանի հետ դաշնակցային և ռազմավարական հարաբերությունների հետագա խորացումը,

-ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը,

-Եվրոպական ընտանիքին մերձենալու արտաքին քաղաքական ուղեգծի իրականացումը, համագործակցության խորացումը ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ եվրոպական կառույցների շրջանակներում,

-անմիջական հարևաններ Վրաստանի և Իրանի հետ փոխհարաբերությունների հետագա զարգացումը և ամրապնդումը,

- Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների հետ փոխգործակցության զարգացումը,

-Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Բրազիլիայի հետ հարաբերությունների ընդլայնումը, արաբական և լատինական ամերիկայի երկրների հետ հարաբերությունների խորացումը, ասիական և աֆրիկյան երկրների հետ համագործակցության զարգացումը,

-արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչների ամրապնդումը, ինչպես բազմակողմ՝ մասնավորապես ՀԱՊԿ, ՆԱՏՕ ուղղություններով, այնպես էլ երկկողմ ձևաչափով,

-հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,

-արտերկրներում հայկական մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված քայլերի ապահովումը,

-օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը,

-գլոբալ նշանակություն ունեցող սպառնալիքների, մասնավորապես ահաբեկչության և կազմակերպված հանցագործության այլ ձևերի դեմ պայքարը,

-ակտիվ ներգրավվածությունը միջազգային կազմակերպություններում և բազմակողմ դիվանագիտության այլ հարթություններում,

-արտաքին տնտեսական ոլորտի խնդիրների լուծման, ՀՀ էներգետիկ և տրանսպորտային անվտանգության ապահովման, արտաքին առևտրի ծավալների ընդարձակման, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնման համար արտաքին ներդրումների իրականացման համար նպաստավոր արտաքին պայմանների ձևավորումը և արտաքին ներդրումների ապահովումը,

-արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնահարցերի լուսաբանման ծառայություններում քարոզչական աշխատանքների նշանակալի ակտիվացումը,

-դիվանագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների իրականացմանը

-թափանցիկ և վերահսկելի հյուպատոսական ընթացակարգերի կանոնակարգումը, նոր էլեկտրոնային ծառայությունների ներդրումը, դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացվածության աշխարհագրական ընդլայնումը:

Արդարադատություն

Արդարադատության ոլորտում 2013թ. կշարունակվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի կատարելագործման աշխատանքները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը Սահմանադրական դատարանի որոշումներին և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի դրույթներին:

Նախատեսվում է մշակել կմշակվեն «Վարչական իրավախախտումների մասին» «Վարչական դատավարության մասին», «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ նոր օրենսգրքերը, «Նոտարիատի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը և այլն:

2013թ. կշարունակվեն քրեակատարողական ոլորտի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն իրավական դաշտի վերանայմանը, ազատագրված անձանց թվի կրճատմանը, ազատագրված արժանապատիվ պայմանների երաշխավորմանը, նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմանը, ազատագրվածների հետ տարվող սոցիալ-իրավական աշխատանքների շրջանակի ընդլայնմանը, կադրային ռեսուրսների կառավարման և վերապատրաստման, ինչպես նաև

քրեակատարողական համակարգում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը: Բացի այդ, ուշադրության ներքո է գտնվելու պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ընթացակարգերի վերանայումը:

Բարեփոխումներ կիրականացվեն նաև նոտարական համակարգում, որոնք ուղղված կլինեն մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման ժամկետների նվազեցմանը (նոտարական համակարգում «մեկ պատուհանի կանգառ» համակարգի ներդրում, նոտարական գործողությունների թվայնացում, նոտարական էլեկտրոնային ցանցի ներդրում, նոտարների թվի աճ, նոտարների պատշաճ վերապատրաստում, նոտարական պալատի դերի և գործառույթների հստակեցում և այլն):

Կշարունակվեն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացը, որպես առաջնային խնդիր դիտարկելով կատարողական վարույթների ժամկետների նվազեցումը:

2013թ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում ևս կիրականացվեն բարեփոխումներ՝ ուղղված համակարգի թվայնացմանն ու ծառայությունների որակի բարձրացմանը:

Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է լինելու անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականի հունվարի 1-ից քրեական գործերի հետ մեկտեղ, անվճար իրավաբանական օգնությունը, կախված անձանց սոցիալական դրությունից, տրամադրվելու է նաև քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով (ներառյալ՝ իրավաբանական խորհրդատվությունը և փաստաթղթերի կազմումը)՝ նախատեսվում է հանրային պաշտպանների թվի ավելացում՝ հասցնելով նրանց թիվը առնվազն 75 մարդու: Բացի այդ, նախատեսվում է մշակել անվճար իրավաբանական օգնության այլընտրանքային եղանակներ, որոնց հիմնական նպատակն է հանդիսանալու բարձրացնել տրամադրվող իրավաբանական օգնության որակը:

Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներից մեկը քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Այն ներառում է նախևառաջ մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ ժամանակահատվածի, ներգրավված պետական օղակների քանակի կրճատում, քաղաքացի-պետական ծառայող շփումների նվազագույնի աստիճան, ծախսատարության կրճատում, կոռուպցիոն ռիսկերի բացառում: Այդ առումով Երևան քաղաքում և մարզերում նախատեսվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, անձնագրային և

վիզաների, անշարժ և շարժական գույքի կադաստրի ծառայությունների տրամադրումը միասնական «մեկ պատուհան» սկզբունքով ներդրվելիք համակարգի միջոցով:

Սփյուռք

Ոլորտի 2013թ. առաջնահերթ խնդիր է համարվելու Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի դրույթների իրականացումը և այդ բնագավառում քաղաքականության համակարգումը: Գործակցության զարգացման երեք ռազմավարական խնդիրների լուծմանն են ուղղվելու հետևյալ քայլերը.

-աջակցել հայկական սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը, օգնել ուժացման դեմ պայքարի զորացմանը՝ դպրոցի, ընտանիքի, մշակույթի և եկեղեցու միջոցով,

-համակողմանի հայտնաբերել և համախմբել սփյուռքի ներուժը և այն ներգրավել Հայաստանի տնտեսական զարգացման, սոցիալական խնդիրների լուծմանը,

Աշխատանքներ են տարվելու սփյուռքի մարդկային, մտավոր և կազմակերպչական հնարավորությունները հաշվառելու, յուրաքանչյուր համայնքի տվյալների շտեմարան ստեղծելու, համայնքներում զարգացման միտումները հետազոտելու ուղղությամբ:

2013թ. մշակվելու և իրականացվելու են համահայկական ծրագրեր՝ սփյուռքը Հայաստանի հետ առավել սերտացնելու, հայկական անկախ պետականության շուրջ աշխարհասփյուռ հայությանը համախմբելու ուղղությամբ:

Կարևորվելու է նաև Սփյուռքի համայնքային ինքնակառավարման մարմինների հզորացման, միջհամայնքային հորիզոնական կապերի հաստատմանն օժանդակությունը, փոքրաթիվ համայնքներում հայկական կյանքի աշխուժացումը, համայնքային կյանքի ակտիվացմանն աջակցելը, կրթական, մշակութային հաստատությունների ստեղծմանն ու գործունեությանն օժանդակելը՝ Հայաստանից հասարակական, քաղաքական, մշակութային գործիչներ գործուղելու, համայնքերի հայկական կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելու միջոցով:

Գործնականում էլ ավելի ընդգրկուն կդառնան տարածաշրջանային մերձավոր սփյուռքի հետ սոցիալ-մշակութային և կրթական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը, որոնք բովանդակային առումով պետք է բխեն “ինտեգրում՝ առանց ձուլման” սկզբունքից:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը մեծապես կօժանդակի սփյուռքագիտության ոլորտում մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը, փորձի փոխանակումը:

Օրակարգային խնդիրների շարքում կընդգրկվեն նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերի կատարելագործման, ոլորտին առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացման, սփյուռքահայերի կացության իրավունքի, երկքաղա-

քացիության, քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ իրավական ակտերի մշակման հարցերը:

Սփյուռքի հայ համայնքներում հայապահպանության, տեղեկատվական ակտիվ համակարգի ձևավորման, ուսուցողական և ճանաչողական առումով մեծ է նաև սփյուռքում հեռարձակվող հայկական հեռուստաձրագրերի դերն ու նշանակությունը, այդ առումով աջակցություն կցուցաբերվի Հայաստան-Սփյուռք գործակցության հիմքում ընկած ամենատարբեր խնդիրների իրազեկման և լուծումների առաջադրման գործին:

2013թ. ընթացքում կշարունակվեն Համահայկական խորհրդատուների և գիտաժողովների կազմակերպման աշխատանքները, Սփյուռքի ամառային դպրոցի աշխատանքները, սփյուռքագիտության ոլորտում գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունները, ինչպես նաև սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման աշխատանքները:

Կրթություն

Կրթության ոլորտը շարունակում է մնալ որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը:

Հանրակրթական հաստատությունների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղություններից մեկը առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումն է, որի արդյունքում 2013 թվականին Հայաստանում կգործեն 106 առանձին գործող ավագ դպրոցներ:

2013թ. նախատեսվում է ընդլայնել հանրակրթական հաստատություններում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ուսուցման նոր տեխնոլոգիաները հասանելի դարձնելով հանրապետության բոլոր դպրոցների համար՝ անկախ դրանց աշխարհագրական դիրքից:

Կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում 2013թ. կիրականացվեն միջոցառումներ, նպատակ ունենալով՝ երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ, մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

Շարունակելու են տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով (ներառյալ շախմատի, օտար լեզվի և երաժշտության դասագրքերը) ապահովելու քաղաքականությունը:

Արտադարձական դաստիարակության ոլորտում անհրաժեշտ է նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

ՀՀ մարզական ավանդույթները շարունակելու, առողջ ապրելակերպ քարոզելու համար և դպրոցահասակ երեխաների ֆիզիկական կարողությունների և առողջության ամրապնդման նպատակով նախատեսվում է դպրոցահասակ երեխաների մասնակցության ապահովումը համաշխարհային դպրոցական խաղերին:

Սփյուռքահայության ազգային ինքնության և սփյուռքահայ համայնքների պահպանման համար նախատեսվում է սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար 2013թ. կիրականացվեն ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման, տրամադրման, վերապատրաստման մեկամսյա դասընթացների կազմակերպման և սփյուռքի համար մասնագիտական կադրերի պատրաստման աշխատանքներ:

Մասնագիտական կրթության բնագավառում կարևորվում է մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացման ու Բոլոնիայի համաձայնագրի դրույթներին դրա համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումների շարունակումը:

Հաշվի առնելով եվրոպական բարձրագույն կրթական տարածքին միանալու կարևորությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող ժամանակացույցերից բխող միջոցառումներ, ինչպես նաև ներդնել ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգ: Բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրումը նախատեսվում է սկսել 2013 թվականից:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում 2013թ. իրականացվելիք բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին, ՄԿՈՒ որակավորումների համակարգի համապատասխանեցումը որակավորումների եվրոպական շրջանակին, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդնումը, համակարգի մասնագետների իրազեկվածության բարձրացումը՝ այլ երկրների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ, ՄԿՈՒ հաստատությունների ցանցավորումը, մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման որակի բարելավումը: Այդ նպատակով նախատեսվում է ստեղծել մասնագիտական

կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգ, խթանել սոցիալական գործընկերությունը և երկխոսությունը, ձևավորել ՄԿՈՒ հաստատությունների արդյունավետ ցանց, ներդնել մասնագետների պահանջարկի ձևավորման արդյունավետ համակարգ, բարելավել ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազան, իրականացնել ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարների և դասավանդողների վերապատրաստումներ, գործատուների մոտ կազմակերպել արտադրական պրակտիկաները և ուսուցումը:

Գիտության ոլորտ

Ոլորտի 2013թ. գերակա խնդիրներն են լինելու.

-հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրությունը,

-գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը նպաստելը,

-գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովումը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության, մրցունակության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

-գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը,

Գիտության ոլորտի բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը: Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

-ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգ,

-ավելացնել գիտությանն ուղղվող ֆինանսավորման ծավալները և ֆինանսավորման արդյունավետությունը,

-իրականացնել գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ,

-բարձրացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,

-արդիականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան,

-զարգացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգը,

-գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածել իրական դրամաշնորհային համակարգի,

-ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,

-ապահովել գիտական ներուժի վերարտադրությունը և երիտասարդացումը,

-նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դրանց դուրսբերմանը ներքին և արտաքին շուկաներ:

ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծով հաստատվելիք հատկացումների շրջանակում նախատեսվում է.

-գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում իրականացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանն ու զարգացման, ինչպես նաև հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը,

-գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (դրամաշնորհների) ֆինանսավորում, ինչը կնպաստի գիտական ներուժի երիտասարդացմանը և որոշակիորեն կմեղմի գիտության ոլորտից երիտասարդ կադրերի արտահոսքը, այդ թվում՝ նաև արտերկիր:

-2011 և 2012թթ. մեկնարկած գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորումով 6 ծրագրերի և 6 նոր ծրագրերի ֆինանսավորում:

ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծի գիտության մասով ընդգրկված ծրագրերը միտված կլինեն գիտության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, գիտական ներուժի երիտասարդացմանը, գիտահրատարակչական գործունեության արդիականացմանը և գիտական ու գիտատեխնիկական բնագավառում միջազգային համագործակցության խթանմանը:

Առողջապահություն

Ոլորտում իրականացվող բարեփոխումները ուղղված են լինելու համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումների, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, ոլորտում սեփականության բազմաձևության խթանմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներհոսքին, կրթական համակարգի արդիականացմանը, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, որակի բարելավման, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, այդ թվում՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների

աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Կշարունակվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրման աշխատանքները, որն աստիճանաբար կփոխարինի և կկատարելագործի գոյություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգը: Առաջիկա տարիներին ևս կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության քաղաքականությունը: Սկսած 2006թ.-ից ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում իրականացվում է անվճար բուժօգնությունը տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների և նեղ մասնագետների կողմից՝ ամբողջ բնակչության համար, անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, առանց այցելությունների սահմանափակման, ինչպես նաև՝ ըստ բժշկական ցուցումների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը, ինչը շարունակվելու է նաև հաջորդ տարի: Արտահիվանդանոցային ծառայությունների պայմանագրային գումարները 2013 թվականից հաշվարկվելու են ըստ գրանցված ազգաբնակչության թվաքանակի: Տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է արտահիվանդանոցային ծառայությունների պայմանագրային գումարները հաշվարկել ըստ սպասարկման տարածքում հաշվառված բնակչության թվաքանակի և վերջինիս տարիքասեռային կազմի համար հաստատված տարեկան ֆինանսական նորմատիվների:

Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա: Բնակչության անապահով խավերի համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվելու մարզային/գյուղական մակարդակում բուժօգնության, առողջության առաջնային պահպանման ոլորտի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, մասնավորապես գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է արդեն սկսված գյուղական ամբուլատորիաների և բուժակ մանկաբարձական կետերի վերանորոգումն ու ժամանակակից սարքավորումներով վերազինումը և մասնագետների ուսուցումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակն է «Նոր տարածքում ապահովել բնակչության

համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդություններից ու թունավորումներից:

Կանանց և երեխաների առողջության պահպանումը, այդ թվում՝ վերարտադրողական առողջության համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու, հետևաբար՝ բնակչության առողջական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման տեսանկյունից: Այդ նպատակով անհրաժեշտ է վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության և սնուցման բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործումը, այդ թվում՝ հղիների նախածննդյան խնամքի և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը, կրճքով սնուցման խրախուսումը, իմունոկանխարգելման միջոցառումների իրականացումը, երեխաների համար հիվանդանոցային մատչելի բուժօգնության ապահովումը:

2013 թվականից նախատեսվում է ընդլայնել համավճարով աշխատող ծրագրերի ցանկը և համավճարը դիտարկել որպես բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման լրացուցիչ ֆինանսական աղբյուր:

Երեխաների և մայրերի բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ նախածննդյան և նորածնային սկրինինգների, պատվաստումների, երեխայի առողջ աճին ու զարգացմանն ուղղված ծրագրերը: 2013թ. շարունակվելու են բարեփոխումները մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունը հիմնականում ուղղված է լինելու դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ավելի արդիական ու արդյունավետ դեղերով ապահովմանը: Սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլյոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդներին դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական մասնագիտական կադրերով հանրապետության ողջ տարածքում համաչափ հագեցվածության ապահովումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

2013 թվականին ոլորտում իրականացվող աշխատանքները նպատակաուղղված կլինեն աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, ծրագրերի հասցեականության մեծացմանը, ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացմանը: Կշարունակվեն կենսաթոշակային, զբաղվածության, հաշմանդամության համակարգի բարեփոխումները և ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման ուղղությամբ: Քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Սոցիալական պաշտպանության համակարգը եվրոկառույցների ամրագրած հիմնարար սկզբունքներին առավել համահունչ դարձնելու նպատակով կընդլայնվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Սոցիալական աջակցության բնագավառում շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես ընտանեկան նպաստի, հասցեականության բարձրացման հարցը: Այդ նպատակով 2013 թվականին շարունակվելու է ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես՝ բազմազավակ ընտանիքներին:

Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, (այդ թվում, երիտասրդների, գյուղական երիտասրդության, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և այլն,) աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը:

Աշխատանքային իրավահարաբերությունների բնագավառում վարվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված կլինի աշխատանքային օրենսդրության կատարելագործմանը և դրա կատարման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, սոցիալական գործընկերության խորացմանը, զբաղվածության պետական կարգավորման գործող ծրագրերի նպատակայնության և արդյունավետության բարձրացմանը, ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների հետևողական կատարման ապահովմանը:

Աշխատանքի վարձատրության բնագավառում բարեփոխումները նպատակաուղղված կլինեն աշխատանքի արդյունավետության խթանմանը, աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովմանն ու աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդմանը:

Ընդհանրի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում նախատեսվում են իրականացնել աշխատանքներ՝ ուղղված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման նպատակով նպաստավոր պայմանների, ինչպես նաև թրաֆիքինգի և

գենդերային բռնության կանխարգելմանն ու գենդերային հավասարություն ապահովող մեխանիզմների ստեղծմանը:

Կշարունակվեն հաստատություններից ընտանիքներ երեխաների տեղավորման քաղաքականությունը, “Խնամատար ընտանիք” և հաստատությունների բեռնաթափման ծրագրերը:

Կշարունակվի թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման ծրագիրը և կիրականացվեն «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով» և «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրով» նախատեսվող միջոցառումները:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակություն ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքները:

Կիրականացվի աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման և մասնագիտական վերապատրաստման ծրագիր:

Տարեցների հիմնահարցերի ոլորտում շարունակվելու են աշխատանքները միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կազմակերպման ուղղությամբ: Կշարունակվի 2012 թվականից մեկնարկած «Ծերացման հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության» իրականացումը:

Կշարունակվեն Մարալիկի սոցիալական բնակարանների համալիրի ձևավորման աշխատանքները, որի արդյունքում կլուծվի շուրջ 100 ընտանիքի բնակարանային խնդիր:

Կշարունակվի իրականացվել անօթևան մարդկանց սոցիալական աջակցության ծրագիրը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում գործունեության գերակա ուղղություն է շարունակելու մնալ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշմամբ հաստատված՝ “Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի”:

Մասնավորապես, նախատեսվում է՝ մշակել կենսաթոշակային հաշիվների վարման համակարգը, աշխատանքներ իրականացնել եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման ուղղությամբ:

Սկսած 2013 թվականի հունվարի 1-ից բոլոր տնտեսվարող սուբյեկտները, բացառապես էլեկտրոնային եղանակով, ամսական պարբերականությամբ կներկայացնեն անձնավորված հաշվարկ իրենց աշխատողներին վճարած եկամուտների և դրանից հաշվարկված եկամտային հարկի վերաբերյալ, որոնց հիման վրա գործարկվելու են եկամտային հարկին վերաբերող մոդուլների կիրարկումը:

Միաժամանակ, աշխատանքներ կտարվեն նաև եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի՝ կուտակային վճարին վերաբերող մոդուլների մշակման, փորձարկման և ներդրման ուղղությամբ՝ ապահովելով պարտադիր կուտակային բաղադրիչի կիրարկումը սկսած 2014 թվականից:

Պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցներ կձեռնարկվեն նաև արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակների համակարգը բարեփոխելու ուղղությամբ: Ըստ այդմ, կմշակվի և ՀՀ կառավարություն կներկայացվի համապատասխան հայեցակարգ:

Հաստատված ժամանակացույցի համաձայն՝ կմշակվեն կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտեր:

Շարունակական բնույթ կկրեն նաև կենսաթոշակային համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը չեզոքացնելու, ինչպես նաև շահառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ժողովրդագրության բնագավառում 2013թ.-ին՝ “ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին” ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման և ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված 2013թ. տարեկան ծրագրի շրջանակներում, կիրականացվեն ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչը նպատակաուղղված է ծնունդների խրախուսմանը, կյանքի սպասվող տևողության մեծացմանը, երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավմանը, վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցմանը, բնակչության ծերացման հետևանքների հաղթահարմանը, բնակչության առողջության և հատկապես, վերարտադրողական առողջության բարելավմանը, ընդհանուր կրթության, բնակչության գիտելիքների, սեռական և վերարտադրողական մշակույթի մակարդակի բարձրացմանը, սոցիալական բոլոր խմբերի համար առողջ վերարտադրողական կյանքի հավասար հնարավորությունների ապահովմանը, բնակչության տարածքային բաշխվածության անհամասնության սահմանափակմանը:

Կշարունակվեն նաև ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունների շուրջ հանրային իրազեկման միջոցառումները:

Մշակույթի ոլորտ

2013թ. ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

-մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանությունը,

-ժամանակակից արվեստի զարգացումը և տարածումը,

-մշակութային կրթություն և գեղագիտական դաստիարակության իրականացումը,

-գրահրատարակչության, տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցումը,

-մարզերում մշակույթի զարգացում և մատչելիության ապահովումը,

-միջազգային համագործակցության ընդլայնումը,

-ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը:

Կշարունակվեն *մշակութային ժառանգության* պահպանությանն աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ՀՀ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը, վերականգնմանը ու սերունդներին փոխանցմանը, դրանց նպատակային օգտագործմանը ու հանրահռչակմանը:

ժամանակակից արվեստի ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն ազգային հենքի վրա հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, մատաղ սերնդի մշակութային կրթությանը և քաղաքացիական կիրթ հասարակության ձևավորմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, նրանց ստեղծագործական ներուժը հայ արվեստի զարգացմանն ուղղորդելու հնարավորությունների ստեղծմանը, մշակութային արտադրանքի ձեռքբերմանը և հանրայնացմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

Գրահրատարակչության ոլորտում իրականացվող ծրագրերի նպատակներն են լինելու տպագիր արտադրանքի տեսքով պահպանել, տարածել և հանրահռչակել ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային ժառանգությունը ներկայացնող գրքերը և էլեկտրոնային կրիչները, նպաստել ազգաբնակչության իրազեկվածությանը հանրագիտարանային, գիտական, ճանաչողական և տեղեկատվական արժեք ներկայացնող գրականության հրատարակմանը, աջակցել ժամանակակից հետազոտողներին և ստեղծագործողներին, նոր ուսումնասիրություններին ու ստեղծագործություններին, համատեղ հրատարակությունների և հատուկ կարևորության գրականության հրատարակմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին՝ պահպանելու իրենց

ազգային լեզուն և գրականությունը, ապահովել գրական, մշակութային, մարզային և այլ բնույթի մամուլի շարունակականությունը:

Մշակութային կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, բոլոր կրթական մակարդակներում մշակութային շուկայի պահանջներին համապատասխան նոր մասնագիտությունների ներդրմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ սոցիալապես անապահով, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

ՀՀ մարզերում մշակույթի զարգացման և մատչելիության ապահովման շրջանակում կիրականացվեն մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային կապերի ամրապնդման, մշակութային գործընթացներում տեղի ազգաբնակչության ներգրավման, մշակութային ծառայություններից օգտվելու և մշակութային գործունեության իրականացման ապահովման միջոցառումներ:

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է լինելու արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, հայկական մշակույթի հանրահռչակմանը, միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ Եվրամիությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից մասնագիտական կառույցներին անդամակցմանը և ակտիվ մասնակցությանը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների ներգրավվածության աճի ապահովմանը, հայաստանյան հասարակությանը աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովմանը:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով կշարունակվի սփյուռքում գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացումը, խրախուսվելու են հայրենիքում ու արտերկրում գործող հայ արվեստագետները՝ կկազմակերպվեն սփյուռքահայ արվեստագետների հորեյաններ, աջակցություն կցուցաբերվի սփյուռքում գործող պարային և թատերախմբերի հյուրախաղերին, նկարիչների ցուցահանդեսներին, գրողների և գրահրատարակիչների համաժողովներին և այլն:

Միջոցառումներ կիրականացվեն նաև ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացման ուղղությամբ:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2013թ. իրականացվելու են օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստմանը, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովմանը, ոլորտում գործող միջազգային մարմիններին, ինչպես նաև համաձայնագրերին անդամակցելուն, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստմանը, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացմանը, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցությանն ուղղված աշխատանքներ՝ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցով:

Միջին մասնագիտական կրթություն և արտադպրոցական դաստիարակության ասպարեզում իրականացվելիք աշխատանքները ուղղված են լինելու մանկապատանեկան մարզադպրոցներում պարապողների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև նրանց կողմից ընտրված մարզաձևերից ունակությունների ձեռքբերման և կատարելագործման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը ու մատուցվող ծառայությունների ապահովմանը:

Երիտասարդական ոլորտում 2013թ. իրականացվող քաղաքականությունը ենթադրում է բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, առողջ ապրելակերպի խթանմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը: Ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացնել թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ: Ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու և երիտասարդների լիակատար ինքնադրսևորման համար:

Բնապահպանության ոլորտ

Բնապահպանության ոլորտում 2013թ. կարևորագույն և գերակա նպատակներն են համարվելու.

- երկրում բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,
- հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,
- բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,
- ընդերքի և հողերի պահպանության ապահովումը,
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը, ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը,
- շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների և ուսումնասիրությունների ապահովումը,
- շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը,
- բնապահպանական կառավարման բնագավառում վարչարարության կատարելագործման նպատակով մասնավոր և հանրային հատվածների համագործակցության մեխանիզմների զարգացման և ներդրման գործընթացների ապահովումը, բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և միջազգային կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բյուջեների կազմման բնագավառում

2013 թվականին հետևողականորեն շարունակվելու են պետական բյուջեի պլանավորման առաջադեմ ձևի՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման և խորացման ուղղությամբ աշխատանքները, որոնք ուղեկցվում են բյուջետային ծրագրերի համար չափելի (գնահատելի) նպատակների և կատարողական պահանջների սահմանմամբ և ուղղակիորեն կապված կլինեն հիմնական քաղաքականությունների և գերակայությունների հետ:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

2013թ. հարկային և մաքսային քաղաքականությունը ուղղված կլինի վերջին տարիներին վարվող քաղաքականության միտումների զարգացմանը: Մասնավորապես.

- ամբողջական ծավալով աշխատանքներ կիրականացվեն 2013թ. պետական բյուջեով նախատեսված հարկերի և պարտադիր վճարների ապահովման ուղղությամբ,
- կշարունակվեն աշխատանքները հարկային վարչարարության բնագավառում առկա մեխանիզմների ու համակարգերի զարգացման, դրանց որակական նոր աստիճանի բարձրացման և գնահատման ուղղությամբ,

-կշարունակվեն աշխատանքները ռիսկերի կառավարման հիման վրա արդյունավետ հարկային և մաքսային հսկողական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես. վերլուծական կարողությունների զարգացման միջոցով ռիսկերի բացահայտմանն ուղղված աշխատանքներ, որի շրջանակներում կգործարկվի հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվարկների, հաշվետվությունների գրասենյակային (կամերալ) ուսումնասիրությունների ավտոմատացված համակարգ,

-կշարունակվեն աշխատանքները ստվերի կրճատմանն ուղղված մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ,

-կապահովվեն բոլոր անհրաժեշտ պայմանները էլեկտրոնային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար, կընդլայնվեն հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ծավալները,

-կշարունակվի հարկ վճարողներին ժամանակին իրազեկումը՝ հարկ վճարողների սպասարկման կենտրոնների, հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի, հարկային և մաքսային մարմինների պաշտոնական ինտերնետային կայքի, հրապարակումների և իրազեկման այլ աղբյուրների միջոցով,

-կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվելու եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման ավտոմատ համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ:

-կշարունակվեն աշխատանքները հարկային օրենսդրության կատարելագործման և ընթացակարգերի միատեսակ կիրառման, հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրման, մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ձևավորման, ինչպես նաև հարկային մարմնի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

-միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա վերջնականորեն կներդրվեն ռիսկերի վրա հիմնված մաքսային հսկողության համակարգերը,

-մաքսային ծառայությունում մեկնարկող ԹՎինինգ ծրագրի շրջանակներում կշարունակվեն մաքսային օրենսդրության ու ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին,

-միջոցառումներ կիրականացվեն մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության ընդլայնման, ինչպես նաև մաքսային վարչարարության մեթոդաբանության արդյունավետ իրականացման ուղղությամբ,

-կշարունակվեն աշխատանքները մաքսային համակարգում ինքնահայտարարագրման մեխանիզմի կիրառման ընդլայնման, մաքսատների կարողությունների զարգացման, ինչպես նաև մաքսային հսկողության կատարելագործման ուղղությամբ,

-կշարունակվեն աշխատանքներ ՀՀ և ԵՄ միջև ազատ առևտրի խորը և համապարփակ համաձայնագրի կնքման ուղղությամբ,

-կիրականացվեն աշխատանքներ սահմանների համալիր կառավարման ուղղությամբ, մասնավորապես՝ տեղեկատվության փոխանակման և ընթացակարգերի ներդաշնակեցման,

-կշարունակվեն հայ-վրացական՝ “Բագրատաշեն”, “Գոգավան” և “Բավրա” պետական սահմանի անցման կետերի վերակառուցման և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքները:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման ոլորտում 2013թ. նախատեսվում է.

-ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակականությունը և նոր գործող ծրագրի գործողության ժամկետում ավարտին հասցնել պետական գույքի մասնավորեցման հիմնական գործընթացը,

- իրականացնել պետական գույքի կառավարման 2011-2013 թվականների ծրագրով սահմանված միջոցառումները և նախատեսված գործողությունները,

-առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի արդյունավետ կառավարման և մասնավորեցման արդյունքում բարձրացնել ընկերությունների գրավչությունը տեղական ու օտարերկրյա ներդրողների համար,

-զարգացնել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը,

-ապահովել մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների իրականացման և սոցիալական երաշխիքների ապահովման առաջնայնությունը,

-պետական գույքի կառավարումից ու մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին ավելացնել պետական բյուջեի եկամուտները,

-իրականացնել պետական գույքի (շենք-շինություններ) վերանորոգման աշխատանքներ, որն ավելի գրավիչ կդարձնի դրանց վարձակալությունը,

-կատարելագործել պետական գույքի հաշվառման համակարգը,

-ավարտել պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման աշխատանքները,

-ներդրումների և սոցիալական երաշխիքների ընդգրկմամբ, մասնավորեցման գործընթացի ապահովման շնորհիվ նպաստել հանրապետությունում տնտեսական աճի խթանմանը,

-ապահովել պետական գույքի օգտագործման արդյունավետությունը,

-պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում սահմանել կառավարիչների (աշխատակազմի ղեկավար, գործադիր տնօրեն, լիազոր ներկայացուցիչ) աշխատանքի վերահսկողության և գնահատման հստակ համակարգ,

- իրականացնել մի շարք առևտրային կազմակերպություններում պետության լիազոր ներկայացուցիչների պիլոտային ծրագիրը և առաջարկություններ ներկայացնել ավելի մեծ թվով ընկերություններում լիազոր ներկայացուցիչների ինստիտուտի ներդրման վերաբերյալ,

-կառավարման ոլորտում ապահովել մասնակիցների շահերի ներդաշնակությունը:

Անշարժ գույքի կադաստր

Ոլորտում իրականացվող քաղաքականությունը 2013թ. ուղղված է լինելու Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի զարգացմանը խոչնդոտող գործոնների վերացմանը և արդիական, զարգացող տեղեկատվական հասարակության նորանոր պահանջները բավարարելու ունակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բարձր մակարդակով, համակարգի ձևավորմանը: Այս աշխատանքների շնորհիվ հնարավոր կլինի զգալիորեն պարզեցնել իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման ընթացակարգերը:

Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում կշարունակվեն պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային) թվային ֆոնդի ստեղծման և թարմացման աշխատանքները՝ հիմնված նորագույն՝ արբանյակային և վերգետնյա հանութային տեխնոլոգիաների վրա, ինչպես նաև պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացման, աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պաշտոնական տեղեկատվությունների և բառարանների հրատարակման, հիմնարար քարտեզագրական ստեղծագործությունների և բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման աշխատանքները:

Զգալի ուշադրության կարժանանան թեմատիկ քարտեզագրության, այդ թվում ատլասների ստեղծման աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն հանրապետության պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին, ինչպես նաև գիտության, կրթության, պաշտպանության և այլ բնագավառներին հայերեն լեզվով ստեղծված ժամանակակից պահանջներին համապատասխանող քարտեզագրական նյութերով ապահովման ուղղությամբ:

Կշարունակվեն աշխատանքները ՀՀ խոշոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման ուղղությամբ:

Հողաշինարարության և հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ աշխատանքներ կիրականացվեն հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման, մարզերի, համայնքների վարչական սահմանների ամրացման և փոփոխության, պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործման ուղղություններով, աջակցություն կցուցաբերվի հողերի միավորման ծրագրերին և հողի շուկայի ձևավորմանը:

Շուկայական մեխանիզմների վրա հիմնված հարկման ռեժիմ սահմանելու նպատակով կներդրվի գնահատման նոր համակարգ: Աշխատանքներ կիրականացվեն անշարժ գույքի միասնական հարկին անցման, ինչպես նաև անշարժ գույքի շուկայի իրավիճակի փոփոխությունների բացահայտման և կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման ուղղությամբ:

Անշարժ գույքի շուկայում գնագոյացմանը համահունչ կադաստրային գնահատման կարգերի սահմանման նպատակով անհրաժեշտ է անշարժ գույքի կադաստրային արժեքի հաշվարկման համար կիրառել շուկայական մեթոդների վրա հիմնված սկզբունքներ, հողամասը և դրա վրա կառուցված շինությունները դիտարկել և գնահատել որպես անշարժ գույքի մեկ միասնական միավոր: Անշարժ գույքի շուկայական մեթոդների վրա հիմնված միասնական գնահատման կարգերի մշակման նպատակով պարբերաբար կիրականացվեն համակարգված դիտարկումներ, որի հիմնական խնդիրն է անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովումը, անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը՝ հողամասերի և շենքերի ու շինությունների միասնական գոտիների սահմանների նկարագրում, տարածագնահատման միասնական գոտիականության գործակիցների և բազային արժեքների դուրս բերում, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրային միասնական գնահատման բանաձևերի մշակման և հետագա կատարելագործման առաջարկությունների ներկայացում:

Պետական վիճակագրություն

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով 2013թ. մասնավորապես նախատեսվում է.

-վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

-վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

-վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանված “Տվյալների տարածման հատուկ ստանդարտի”), որոնք ենթադրում են նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

-վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորինս նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը,

-համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

-շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (ներառյալ՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (ներառյալ՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

-անցում կատարել վարչական ռեզիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական

աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

-տեղական (համայնքային) վարչական ռեզիստրների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

-շարունակել գեներային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

-ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ, իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

-շարունակել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) թողարկումը, ինչպես նաև ընդլայնել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով,

-կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

Հասարակական կարգի պահպանություն

2013թ. ոլորտում շարունակվելու են բարեփոխումները օրինականության, հասարակական անդորրի, հասարակական կարգի, մարդու անվտանգության ապահովման, քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանցագործությունների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ:

Նշված բարեփոխումներն ամբողջական և լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ է ներդնել օրենսդրական և վարչարարական նոր համակարգեր, նախատեսել պրակտիկ կիրառության նոր գործիքներ և մեթոդներ:

Մասնավորապես 2013թ. նախատեսվում է իրականացնել.

-կառուցվածքային բարեփոխումներ քառաստիճան ոստիկանական համակարգի ներդրում կենտրոնական ապարատ, տարածքային, տեղամասային և ոստիկանական հենակետեր: Այսինքն,

նախատեսվում է հնարավորինս ապակենտրոնացնել ոստիկանական համակարգը, որի շրջանակներում իրականացվում են *համայնքային ոստիկանության* մոդելի ներդրման աշխատանքներ, որի հիմնական նպատակների թվում է նաև ոստիկանություն-հասարակություն անմիջական կապի և համագործակցության ամրապնդումը: 2012 թվականից Երևան քաղաքում գործում են համայնքային ոստիկանության հենակետեր: 2013 թվականից այն կներդրվի նաև ՀՀ մարզերում: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները լինելու են շարունակական, որի հաջորդ քայլը՝ «Համայնքամետ ոստիկանության» փորձարարությունն է, որն ընդգրկելու է ոստիկանության արտաքին ծառայության բոլոր ուժերը:

- հատուկ գումարտակի կարգավիճակով ՀՀ ոստիկանության կառուցվածքում *նոր պարեկապահակակետային ծառայության ստեղծում*՝ 2012թ. մարտ ամսից գործում է *նշված ծառայություն*, որի խնդիրն է ծառայության անցման նոր ձևերի և մեթոդների կիրառմամբ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության պատշաճ մակարդակի ապահովումը, հանրության կողմից ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացումը:

- ոստիկանության զորքերում շարքային կազմի պայմանագրային զինծառայության անցման գործընթացի ավարտում, որի արդյունքում զգալիորեն բարելավվելու է ոստիկանության զորքերի պատրաստականության վիճակը:

- ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում *օպերատիվ արձագանքման կենտրոնի* ստեղծման և Երևան քաղաքի մարդաշատ վայրերում տեսադիտարկման համակարգերի ներդրման աշխատանքների ավարտում:

- ոստիկանության արտաքին ծառայություն իրականացնող բոլոր ծառայողներին նոր համազգեստով և անհրաժեշտ միջոցներով աստիճանաբար հանդերձավորելու աշխատանքների շարունակում,

-կրթական բարեփոխումներ (ներդրման ընթացքում են ոստիկանական կրթության առաջադիմական ստանդարտները՝ առանձին նեղ մասնագիտություններով ոստիկանների պատրաստման, առաջխաղացման համար ոստիկանների ուսուցման, վերապատրաստման և ատեստավորման նպատակով),

-ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ (կենտրոնացված դիտակետերի ստեղծում, ճանապարհային ոստիկանության ուժերի և միջոցների Կառավարման կենտրոնի գործարկում, GPRS համակարգի գործարկում, խախտումների վերահսկման ավտոմատ համակարգի ներդրման աշխատանքների շարունակում և այլն),

-քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ (քաղաքացիների առանձին իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես քրեադատավարական երաշխիքներ, երթեր, ցույցեր և հանրահավաքներ անցկաց-

ներու լրացուցիչ երաշխիքների ապահովում, մասնագիտացված ոստիկանական ստորաբաժանումների ստեղծում և այլն),

-2012թ. հունիսի 1-ից գործարկված կենսաչափական տվյալներով փաստաթղթերի տրամադրման նոր անձնագրային համակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և սահմանային անցման կետերում տեղադրել անձնագիր կարդացող և ստուգող սարքավորումներ:

-քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցում, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործում (մասնավորապես գործում է քաղաքացիների ընդունելության «մեկ դահլիճի» սկզբունքը),

-թրաֆիկինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

-կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

-ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ (թեժ գծի արդյունավետության բարձրացում, քաղաքացիների դիմում-բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում, հասարակության և ՋԼՄ-ների հետ համագործակցության բարելավում),

-ոստիկանների սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ: